

ԱԳՐՈՔԵՐՄԻԱԿԱՆ ՊՐՈՊԼԵՄԵՆԵՐԻ ԵՎ ՀԻԿՐՈՊՈԽԱԿԱՅԻ ԽԱՏԻՑՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СООБЩЕНИЯ ИНСТИТУТА АГРОХИМИЧЕСКИХ ПРОБЛЕМ И ГИДРОПОНОНИКИ
№ 12

Օ Բ ԳԱՍՊԱՐՅԱՆ, Խ. Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ա.ՍԿՈՐԲԻՆԱԹԹՎԻ և Յ.ԿԱՐՈՏԻՆԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱ.ՅՈԹՅԱ
ՀԻԴՐՈՊՈԽԱԿԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՃԵՑՎԱԾ ՀԱՄԵՄՈՒՆՔԱՅԻՆ
ԿԱՆԱԳԵՂԵՆԻ ՄԵՋ

Համեմունքային կանաչեղենը հում վիճակում մարդկանց համար վիտա-
մինների պահանջը բավարարելու լավ աղբյուր է հանդիսանում [1, 2, 3]:

Համեմունքային կանաչեղենից մաղդանուր, նեխուրը, սամիթը, համե-
մը, ռեհանն ու ծիթրենը, դեռ վաղ ժամանակներից, հատկապես արեկելան ժո-
ղովորդների կողմից օգտագործվել են որպես լրացուցիչ սննդանյութ:

ՀԱՅՀ ԳԱ ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոխակայի ինստիտուտի
բացօթյա հիդրոպոխակական կայանում կատարված հետազոտությունները
ցուց են տալիս համեմունքային կանաչեղենի անհող մշակույթի բարձր ար-
դյունավետությունը սովորական՝ դաշտային մշակույթի համեմատությամբ
[9, 10, 11]:

Աշխատանքի նպատակն է՝ քիմիական վերլուծության միջոցով ուսում-
նասիրել բացօթյա հիդրոպոխական պայմաններում բույսերի աճի ընթաց-
քում, համեմունքային կանաչեղենի մեջ ասկորբինաթթվի և թ կարոտինի պա-
րունակությունը, տալ հիդրոպոխական արտադրանքի վիտամինային ար-
ժեքը:

Ասկորբինաթթուն և թ կարոտինը աճի աղդակենքը են և հիմնականում
սինթեզվում են բուսական հյուսվածքներում [3, 4, 12—14]: Նրանց ուսում-
նասիրությունը համեմունքային կանաչեղենի մեջ գործնական կարևոր նշա-
նակություն ունի:

Ուսումնասիրությունները կատարվել են 1966—1968 թթ. ընթացքում՝
մաղդանոսի, նեխուրի, սամիթի, համեմի, ռեհանի և ծիթրենի կանաչ զանգ-
վածի և նրա բաղկացուցիչ մասերի (տերև, տերևակոթ և ցողուն) հետո Հիդ-
րոպոխական փորձերը կատարել է լ. ն. Միքայելյանը, որը և նմուշներ է
տրամադրել մեզ:


Ասկորբինաթթուն և թ կարոտինը հանրահայտ մեթոդով [15, 16] որո-
շել ենք 400 նմուշների մեջ յուրաքանչյուր անալիզի 4—6 կրկնողությամբ:

Որպես ստուգիչ ծառայել է այդ համեմունքների հողային մշակույթը:
Ըստ գրականության տվյալների [5—7, 13, 17—23] ասկորբինաթթվի և թ կա-
րոտինի պարունակությունը համեմունքային կանաչեղենի մեջ խիստ փոփո-
խական է և պայմանավորված է բույսերի աճեցման բնակլիմայական պայ-
մաններով (աղյուսակ 1):

Տարրեր ընտակլիմայական պայմաններում աճեցված համեմունքային կանաչեղենի կանաչ զանդվածում ասկորբինաթթվի և Յ-կարոտինի պարունակության տատանման սահմանները 1947—68 թթ. ընթացքում (մգ 100 գ թթարժ բարժուսից)

Կանաչեղենի տեսակը	Ասկորբինա- թթու	Յ-կարոտինի
Մաղղանոս	58—330	3—7
Նեխուր	18—183	1.3—18
Սամիթ	43—243	3—13
Համեմ	117—274	3—5
Ռեհան	110—296	2—3

Մաղղանոս-պերուշակ



Նկ. 1. Ասկորբինաթթվի և Յ-կարոտինի պարունակությունը մաղղանոսի կանաչ զանգվածում 1966—68 թթ. միջին տվյալներով:

1. Ասկորբինաթթվի պարունակությունը՝ 1. ընդհանուր կանաչ զանգվածում, 2. տերևային մասում, 3. ցողունի մեջ, Յ-կարոտինի պարունակությունը՝ 4. ընդհանուր մասում, 5. տերևային մասում, 6. ցողունի մեջ; Բոլոր նկարների համար կորերի բացատրությունը նույն նշանակությունն ունի:


1966—1968 թթ. մեր հետազոտությունների միջին տվյալները ցույց են տալիս, որ բույսերի սեղոնային աճի ընթացքում, կուտակված կանաչ զանգվածում և նրա բաղկացուցիչ մասերում ասկորբինաթթվի և Յ-կարոտինի կենսասինթեզն ըստ ամիսների անհամաշափ է ընթանում (Նկ. 1, 2, 3, 4, 5):

Ուսումնասիրված կանաչեղենի մեջ ասկորբինաթթվի պարունակությունն ավելի բարձր է համեմատաբար մեղմ ջերմաստիճանային ամիսներին (հունիս, հոկտեմբեր) և նկատելիորեն թույլ է առավել շոգ եղանակներին (օգոստոս):

Յ-կարոտինի կուտակումը լնդհակառակը՝ անհամեմատ ակտիվ ընթանում է բարձր ջերմաստիճանով ամիսներին:


Հետազոտված վիտամինների կենսասինթեզն ամենից ակտիվ ընթանում է բույսերի տերևային ապարատում, չնայած չի բացառվում նրանց կուտակումը և ցողուններում (աղ. 2):

ՆԵԽԱՐ - ԸՆԼՈՒՐ





Դ. 2. Ասկորրինաթթվի և Յ-կարոտինի պարունակությունը նեխուրի կանաչ զանգվածում 1966—68 թթ. միջին տվյալներով:

ՈԵԽԱՆ - ԲԱՅՈԼԻ



Դ. 3. Ասկորրինաթթվի և Յ-կարոտինի պարունակությունը ռեհանի կանաչ զանգվածում 1966—68 թթ. միջին տվյալներով:



Նկ. 4. և 5. Ասկորբինաթթվի և Յ-կարոտինի պարունակությունը համեմի և ծիթքնի կանաչ զանգվածում 1966—68 թթ.
միջին տվյալներով:

Ասկորբինաթթվի և Յ կարոտինի պարունակության տատանման սահմանները մաղ-
ղանոսի (պետրոսկա) կանաչ զանգվածում 1966—68 թթ. ընթացքում
(մգ 100 գ թարմ բույսից):

Բույսի տեսակը և մասե- րը	Ասկորբինաթթու		Յ-կարոտին		
	Հիգրոպոնիկա	Հող	Հիգրոպոնիկա	Հող	
Տեղականի Ցիտրուսի ճիչի	Ընդհանուր կանաչ զանգված Տերե-տերեկակոթ Ցողուն	150,2—235,3 182,0—300,0 20,5—64,5	119,0—205,0 161,4—305,0 26,0—87,6	8,5—13,1 10,2—17,2 0,9—4,0	2,9—4,9 4,7—14,2 0,9—1,4
Արևածա- րի պտուղ- անի ճիչի	Ընդհանուր կանաչ զանգված Տերե-տերեկակոթ Ցողուն	43,7—222,2 143,0—266,0 21,2—52,0	40,0—250,0 130,0—270,0 20,0—48,0	5,3—13,0 9,0—18,9 1,0—1,4	3,0—12,0 5,0—15,0 1,0—1,5

Հիգրոպոնիկ պայմաններում Յ-կարոտինի քանակությունը մաղանու-
սի փորձարկված 2 ձևերի տերևային մասերում ավելի բարձր է հողային ստու-
գիչ համեմատ և հասնում է 18,9 մգ%: Նեխուրի բույսը մաղանոսի հա-
մամատությամբ աղքատ է ասկորբինաթթվով, վերջինիս պարունակությունը
(95,0—110 մգ%) գրեթե անփոփոխ է մշակույթի տարբեր պայմաններում (աղ.
3): Յ-կարոտինի քանակությունը նեխուրի բույսի մեջ հիգրոպոնիկայի դեպ-
քում համեմատաբար բարձր է:

Ասկորբինաթթվի և Յ-կարոտինի պարունակության տատանման սահմանները նեխու-
րի (սельքեր) կանաչ զանգվածում
1966—68 թթ. ընթացքում (մգ 100 գ թարմ նյութից):

Բույսերի տեսակը և մասերը	Ասկորբինաթթու		Յ-կարոտին		
	Հիգրոպոն- իկա	Հող	Հիգրոպոն- իկա	Հող	
Արևածա- րի պտուղ- անի ճիչի	Ընդհանուր կանաչ զանգ- ված Տերե-տերեկակոթ Ցողուն	22,5—58,0 54,1—90,0 11,4—36,4	25,0—40,4 48,0—62,2 13,1—26,1	2,2—6,9 5,3—12,3 0,5—0,9	2,1—3,7 6,5—7,1 0,4—0,7
Տեղականի Ճիչի	Ընդհանուր կանաչ զանգ- ված Տերե-տերեկակոթ Ցողուն	40,3—83,5 25,0—60,0 13,3—27,0	25,0—75,0 50,0—110,0 13,8—30,0	3,6—8,0 7,3—15,0 1,0—1,9	3,0—7,1 6,8—12,5 1,0—1,5

Համեմի կանաչ զանգվածի տերևային մասում ասկորբինաթթվի և
Յ-կարոտինի պարունակությունը սեղոնի ընթացքում փոփոխական է (աղ. 4):

Մակայն հողային ստուգիչ համեմատությամբ նրանց քանակությունը
նկատելի տարբերություններ չի տանիս:

Սամիթի բույսի մեջ հիգրոպոնիկայի պայմաններում ասկորբինաթթվի
քանակությունն ավելի բարձր է (223 մգ%), հողային մշակույթի համեմատու-
թյամբ (184 մգ%): Նույնպիսի օրինալափություն նկատվում է նաև Յ-կարո-
տինի համար (հիգրոպոնիկա—8,2 մգ%, Հող—5,2 մգ%):

Ասկորբինաթթվի և Յ-կարոտինի պարունակության տատանման սահմանները համեմ (կորиандր) և սամիթի (սկրոպ) կանաչ զանգվածում 1967—68 թթ. ընթացքում (մգ 100 գ թարմ բույսից):

Բույսի տեսակը և ժամերը	Ասկորբինաթթու		Յ-կարոտին		
	հիգրոպո-նիկա	հող	հիգրոպո-նիկա	հող	
Համեմ	Ընդհանուր կանաչ զանգ-ված Տերև-տերևակոթ Ցողուն	58,0—124,0 84,6—167,0 28,6—62,7	54,0—124,0 64,6—170,3 25,0—51,2	3,5—7,4 8,6—12,0 1,1—1,8	2,6—7,3 4,7—10,2 0,7—1,9
Սամիթ	Ընդհանուր կանաչ զանգ-ված Տերև-տերևակոթ Ցողուն	133,0—180,0 185,0—223,0 28,6—68,0	83,0—154,0 110,0—189,0 25,0—46,2	4,6—7,9 6,1—8,2 1,5—2,0	3,1—4,5 4,5—5,29 1,4—2,0

Զգալի քանակությամբ ասկորբինաթթու կուտակվում է նաև համեմի (63 մգ %) և սամիթի (68 %) բույսի ցողունների մեջ:

Բացօթյա հիգրոպոնիկայում համեմունքային կանաչեղենից ուժանան ալքի է ընկնում համեմատաբար արագ վեգետացիայով, բայց ասկորբինաթթվի և Յ-կարոտինի պարունակությունն այստեղ այնքան էլ բարձր չէ (աղ. 5):

Ասկորբինաթթվի և Յ-կարոտինի պարունակության տատանման սահմանները մշակութիւն տարբեր պայմաններում սեհանի և ծիթրենի կանաչ զանգվածում 1966—68 թթ. ընթացքում (մգ 100 գ թարմ նյութից):

Բույսի տեսակը և ժամերը	Ասկորբինաթթու		Յ-կարոտին		
	հիգրոպո-նիկա	հող	հիգրոպո-նիկա	հող	
Բիեսան	Ընդհանուր կանաչ զանգ-ված Տերև տերևակոթ Ցողուն	26,3—79,8 34,5—92,3 12,0—29,9	25,0—48,4 30,0—57,0 12,0—23,0	2,5—10,5 3,9—13,8 0,2—1,4	2,8—3,3 4,3—5,7 0,5—0,7
Միթրեն	Ընդհանուր կանաչ զանգ-ված Տերև-տերևակոթ Ցողուն	40,4—91,5 62,1—100,0 10,0—25,0	23,8—68,6 44,9—75,0 10,0—18,7	4,1—9,9 4,8—10,0 0,2—0,9	5,5—6,8 5,5—6,8 0,6—0,7

Միթրենի կանաչ զանգվածում ասկորբինաթթվի քանակը հիգրոպոնիկայում ավելի բարձր է, քան հողում, մինչդեռ Յ-կարոտինը՝ երկու դեպքում էլ զրեթե հավասար է:

Ստացված տվյալներից երեսում է, որ օգտագործելով օրական 25—50 գ. բացօթյա հիգրոպոնիկայի պայմաններում աճեցված համեմունքային կանաչեղեն, հնարավոր է լիովին ապահովել մարդու ասկորբինաթթվի և Յ-կարոտինի պահանջը [5, 6, 13]:

Մեր ուսումնասիրությունները, այսպիսով, թույլ են տալիս անել հետևյալ եղրակացությունները:

1. Մշակութիւն բացօթյա գլաֆարային հիդրոպոնիկական պայմաններում համեմոնքային կանաչեղենի մեջ ասկորբինաթթվի և Յ-կարոտինի պարունակությունը բույսի սեզոնային աճման ընթացքում, նրա տեխնիկական հասանացման ֆազայում, փոփոխական է: Ասկորբինաթթվի կենսասինթեզը համեմատաբար ակտիվ ընթանում է ոչ շոգ ամիսներին, իսկ Յ-կարոտինինը՝ շոգ եղանակին (օգոստոս):

2. Ասկորբինաթթվի և Յ-կարոտինի պարունակությունը կանաչեղենի տերևային մասում, ցողունի համեմատությամբ, բարձր է:

3. Համեմոնքային կանաչեղենի մեջ ասկորբինաթթվի և Յ-կարոտինի քանակական հարաբերությունը կազմում է 12—16:

4. Ուտելու կանաչեղենի բացօթյա հիդրոպոնիկական արտադրանքի վիտամինային արժեքը գերազանցում է հողային ստուգիչն:

О. Г. ГАСПАРЯН, Н. А. ХАЧАТРИЯН

СОДЕРЖАНИЕ АСКОРБИНОВОЙ КИСЛОТЫ И Յ-КАРОТИНА В НЕКОТОРОЙ ПРЯНОЙ ЗЕЛЕНИ, ВЫРАЩЕННОЙ В УСЛОВИЯХ ОТКРЫТОЙ ГИДРОПОНИКИ

Резюме

В течение 1966—68 гг. нами проводились исследования по содержанию аскорбиновой кислоты и Յ-каротина в растениях пряной зелени: петрушке, сельдерея, укропе, кориандре, базилике и чабреце, выращенных в условиях открытой гидропоники в окрестности Еревана.

Наибольшее накопление аскорбиновой кислоты отмечается в сравнительно нежаркие месяцы (июнь и октябрь), а биосинтез Յ-каротина происходит более интенсивно при высоких температурах (август).

Содержание аскорбиновой кислоты и Յ-каротина в зеленой массе растений колеблется в значительно широких пределах. Эти витамины в основном накапливаются в листовом аппарате растения.

Выращивание пряной столовой зелени в условиях открытой гидропоники открывает возможность обильного и рационального удовлетворения потребности населения в витаминах.

О. В. ГАСПАРЯН, Н. А. ХАЧАТРИЯН

ON THE CONTENTS OF ASCORBIC ACID AND Յ-CAROTIN IN SOME SPICY GREENS GROWN UNDER OPEN-AIR HYDROPONIC CONDITIONS

Summary

The results of three years of investigations are given on the contents of Vitamin C and provitamin A in the spicy plants of celery, parsley, basil and savory grown under open-air hydroponic conditions.

The growing of the spicy greens under open-air hydroponic conditions opens up the possibility of meeting the demands of the population in vitamins plentifully and rationally.

1. Աղոթք Գ. Բ. Կովկասյան ժողովուրդների ևնեղի մեջ օգտագործվող կանաչեղենները, Երանց վիտամինային արժեքն ու դինամիկան: Գիւերտացիա, Երևան, 1948.
2. Овчаров К. Е. Витамины в растений, М., 1964.
3. Кезели Т. А. Витамины в растениях Грузии. Тбилиси, 1966.
4. Мурри И. К. Проблема витаминов в растениеводстве. Биохимия культурных растений, т. 8, Сельхозгиз, 1948.
5. Царевитинов Ф. В. Химия и тавароведение плодов и овощей, Госторгиздат, М., 1949.
6. Канчук Ш. Ф., Верховская Г. С., Морозова Г. Н. Экономическое обоснование перспективного плана развития производства витаминов. Витамины (тр. т. VII, Пищепромиздат, М., 1961).
7. Эдельштейн В. И. «Овощеводство», М., 1962.
8. Խաշաբյան Ս. Ս. Բանշարանցային կուպուրաների մշակությունը Երևանում, 1955.
9. Давтян Г. С. Гидропоника как производственное достижение агрохимической науки. Изд-во АН Арм. ССР, 1969.
10. Микаелян Л. Н. Выращивание помидоров без почвы в условиях открытой гидропоники. Автореферат, Ереван, 1968.
11. Майрапетян С. Х. Культура розовой герани в условиях открытой гидропоники. Автореферат, Ереван, 1970.
12. Ермаков А. И. и др. Биохимия овощных культур. Сельхозгиз, 1961.
13. Рубин Б. А., Метлицкий Л. В. Биохимия и качество растительного сырья. Серия VIII, Биология и медицина, 1961.
14. Плешков Б. П. Биохимия сельскохозяйственных растений, 1965.
15. Ермаков А. И. и др. Биохимические методы анализа растений. 1961.
16. Сапожников Д. И. и др. Пигменты пластид зеленых растений и методика их исследования. М., 1964.
17. Луковникова Г. А. Химический состав зонтичных растений. Сб.: «Биохимия овощных культур», М., 1961.
18. Буткевич С. Т., Воронкова М. Н. Химический состав некоторых листовых и пряных овощей Тр. Молд. ниорош. землед. и овощеводство, т. IV, в. I, 1962.
19. Луковникова Г. А. Изменчивость количества химических веществ у овощных культур и использование ее в селекции. Тр. по прикл. ботан. ген. и селекции, т. XXXV, в. I, 1962.
20. Луковникова Г. А. Выращивание зеленых выгоночных культур в зимних теплицах. Вестник с.-х. наук, № 7, 1966.
21. Рубцов Р. В. Химический состав овощей, выращенных на грунте и гидропонным способом, и содержание в них аскорбиновой кислоты. В кн.: «Материалы к XXXVIII годичной конференции студенческого научного общества», Л., 1965.
22. Комарова Р. А. Химический состав петрушки и сельдерея при выгонке в теплицах и подготовке посадочного материала в открытом грунте. Сб. трудов аспирантов и молодых научных сотрудников, 8(12), Л., 1967.
23. Кулиев К. А. Содержание витамина «С» в овощных культурах Туркменской ССР. «Изв. АН Турк. ССР», серия биол. наук, 6, Ашхабад, 1968.